§ 6.2. Էջի Ֆոնի ձևավորում

Փաստաթղթի էջի ֆոնը ձևավորելու համար են ծառայում *Page Layout* ներդիրի *Page Background* խմբում ներառված կոճակները (նկ. 6.7): Խմբի *Watermark* կոճակով բացվող պատուհանում (նկ. 6.8) կարելի է ընտրել ֆոնի առաջարկվող տարբերակներից որևէ մեկը:



Նկ. 6.7. Ֆոնի ձևավորման կոճակներ



Նկ. 6.8. Ֆոնի ձևավորման տարբերակներ

Եթե առաջարկվող տարբերակներից ոչ մեկը չի բավարարում, ապա *Custom Watermark* կոճակով բացվող պատուհանի (նկ. 6.9) օգնությամբ կարող եք ստեղծել ձերը:



Նկ. 6.9. Ֆոնի ստեղծում

Տեքստային ֆոն ստեղծելու համար պետք է ընտրել *Text watermark* փոխանջատիչը, *Text* դաշտում ներմուծել ֆոնում տեղադրվելիք տեքստն ու ընտրել

անհրաժեշտ պարամետրերը. լեզուն *(Language)*, տառատեսակը *(Font)*, չափը *(Size)*, գույնը *(Color)*, գրառման դիրքն *(Layout)* ու թափանցիկությունը *(Semitransparent)*:

Գրաֆիկական ֆոն ստեղծելու համար պետք է ընտրել *Picture watermark* փոխանջատիչն ու *Select Picture* կոճակի օգնությամբ ընտրել անհրաժեշտ պատկերը պահպանող ֆայլը:

Էջի ֆոնը հեռացնելու համար է ծառայում *Remove Watermark* կոճակը (նկ. 6.8):

Page Layout ներդիրի *Page Background* խմբի *Page Color* կոճակով բացվող պատուհանում (նկ. 6.10) կարելի է ընտրել էջի ֆոնի գույնը: Այն կարելի է հեռացնել *No Color* կոճակով:

Page Borders կոճակով բացվող *Borders and Shading* պատուհանի *Page Border* ներդիրում (նկ. 6.11) կարելի է էջին տարատեսակ եզրագծեր ավելացնել: Պատուհանի *Style* դաշտում կարելի է ընտրել եզրագծի ոճը, *Color* դաշտում՝ գույնը, *Width* դաշտում՝ հաստությունը:



Նկ. 6.10. էջի գույնն ընտրելու պատուհան



Նկ. 6.11. Եզրագիծը սահմանելու պատուհան

Օգտակար է իմանալ

- *Page Border* ներդիր պատուհանը հնարավորություն է տալիս եզրագիծը կառուցել *Art* դաշտում առաջարկվող պատկերներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ նպատակի են ծառայում *Page Layout* ներդիրի *Page Background* խմբում ներառված կոճակները:
2. Տեքստային ֆոնի ի՞նչ պարամետրեր գիտեք:
3. Ի՞նչ նպատակի է ծառայում *Page Border* ներդիր պատուհանը:

Լաբորատոր աշխատանք 17

էջի ֆոնի ձևավորում

Քայլ առ քայլ կատարեք հետևյալ գործողությունները.

1. Մտեք *Microsoft Word* տեքստային խմբագրիչի միջավայր:
2. *Office* կոճակով բերվող մենյուի *Open* հրամանի օգնությամբ բացեք նախորդ լաբորատոր աշխատանքում ձեր կողմից ստեղծված փաստաթուղթը:
3. Ընտրեք *Page Layout* ներդիրի *Page Background* խմբի *Watermark* կոճակը, ապա ֆոնի որևէ տարբերակ:
4. Տեքստին ավելացված ֆոնը հեռացնելու համար կրկին ընտրեք *Watermark* կոճակը, ապա բացված պատուհանում՝ *Remove Watermark* կոճակը:
5. Նոր ֆոն ստեղծելու համար նորից ընտրեք *Watermark* կոճակը, ապա բացված պատուհանում՝ *Custom Watermark* կոճակը:
6. Տեքստային ֆոն ստեղծելու համար բացված *Printed Watermark* պատուհանում ընտրեք *Text watermark* փոխանջատիչը:
7. Այբուբենի փոփոխման KDWin ծրագրի օգնությամբ ընտրեք հայկական այբուբենը, իսկ *Font* դաշտում՝ *Arial Armenian* տառատեսակը:
8. *Text* դաշտում ներմուծեք *Բառարան* բառը, *Size* դաշտում՝ *54* չափը, *Color* դաշտում՝ կարմիր գույնը, *Layout* դաշտում՝ *Diagonal* դիրքը:
9. Կիսաթափանցիկ ֆոն ունենալու համար ընտրեք *Semitransparent* դաշտը:
10. Կատարված ընտրությունը հաստատեք *OK* կոճակով:
11. Ընտրեք *Page Layout* ներդիրի *Page Background* խմբի *Page Color* կոճակը, ապա բացված պատուհանում ֆոնի բաց կանաչ գույնը:
12. Փաստաթղթի էջը եզրագծելու համար *Page Borders* կոճակով բացվող *Borders and Shading* պատուհանում ընտրեք *Page Border* ներդիրը:
13. Պատուհանի *Style* դաշտում ընտրեք եզրագծի ձեզ ցանկալի որևէ ոճ, *Color* դաշտում՝ որևէ գույն, իսկ *idth* դաշտում՝ որևէ հաստությունը:

14. Կատարված ընտրությունը հաստատեք *OK* կոճակով:
15. Ստեղծված փաստաթուղթը պահպանեք տվյալ դասարանին հատկացված ֆայլադարանում՝ *Lab_17_** անունով, որտեղ *-ի փոխարեն ներմուծեք աշակերտի դասամատյանի համարը:
16. Տեքստային խմբագրիչի հետ աշխատանքն ավարտեք՝ օգտվելով պատուհանի փակման ☒ կոճակից: